ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2026 թվականի N 1663 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 1989-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 17-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՍՊԱՅԿԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 1989-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1) «ՀՈՒՄՔ ՈՒ ՆՅՈՒԹԵՐ» աղյուսակը 17-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 18-19-րդ կետերով՝

«

18.	1404900008	Սալիկներ	Կոկոսի մանրաթելի և կոկոսի տաշեղների հիմքով, ջերմոցում բույսի աճեցման համար	կգ	4 000 000	Շրի Լանկա, Հնդկաստան, Ինդոնեզիա	Շրի Լանկա, Հնդկաստան, Ինդոնեզիա	1 000 000 000	
19.	2703000000	Տորֆային սուբստրատ	Տորֆային սուբստրատ՝ սալիկների տեսքով, ջերմոցում բույսերի աճեցման համար	կգ	12 711 000	ԵՄ երկրներ, Շրի Լանկա, Հնդկաստան, Ինդոնեզիա	ԵՄ երկրներ, Շրի Լանկա, Հնդկաստան, Ինդոնեզիա	1 302 876 000	

».

2) հավելվածի ցանկի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերությունում «42 864 338 160» թիվը փոխարինել «45 167 214 160» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

19.11.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ